ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թվականի N 44-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1446-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու այն կրելու ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի N 886-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1446-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման N 1 հավելվածում՝

ա. VIII գլխի 102-րդ կետից հանել «՝ կիսաբամբակյա» բառը,

բ. VIII գլխի 107-րդ կետից հանել «հատուկ ստորաբաժանումների համար» բառերը,

գ. IX գլխի 130-րդ կետից հանել «՝ կիսաբամբակյա» բառը,

դ. IX գլխի 135-րդ կետից հանել «հատուկ ստորաբաժանումների համար» բառերը.

2) որոշման N 2 հավելվածում՝

ա. նորմա 6-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «՝ կիսաբամբակյա» բառը, նույն կետի 3-րդ ենթակետի «1» թիվը փոխարինել «2» թվով,

բ. նորմա 6-ի 18-րդ կետի 5-րդ ենթակետից հանել «հատուկ ստորաբաժանումների համար» բառերը,

գ. նորմա 6-ի 19-րդ կետի 3-րդ ենթակետի «1» թիվը փոխարինել «3» թվով,

դ. նորմա 7-ի 6-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «՝ կիսաբամբակյա» բառը, նույն կետի 3-րդ ենթակետի «1» թիվը փոխարինել «2» թվով,

ե. նորմա 7-ի 9-րդ կետի 5-րդ ենթակետից հանել «հատուկ ստորաբաժանումների համար» բառերը,

զ. նորմա 7-ի 10-րդ կետի 3-րդ ենթակետի «1» թիվը փոխարինել «3» թվով,

է. նորմա 8-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «՝ կիսաբամբակյա» բառը, նույն կետի 3-րդ ենթակետի «1» թիվը փոխարինել «2» թվով,

ը. նորմա 8-ի 17-րդ կետի 3-րդ ենթակետի «1» թիվը փոխարինել «3» թվով,

թ. նորմա 8-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28-րդ կետով՝

«

28.	Մարտաբաճկոն	1 հատ	5 տարի	

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ